

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ԺԱՄԸ
10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. երևան
Մասնակցում էին՝**

խորհրդի անդամներ՝

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար

Մասնակիցներ՝

Ա. Երիցյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Դ. Դումանյան	ՀՀ առողջապահության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Ա. Մարտիրոսյան	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտան- գության կարգավորման պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Նազարյան	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ֆ. Յուլալյան	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտան- գության ծառայության տնօրենի տեղակալ
Հ. Հունանյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Վ. Պողոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ս. Ծատուրյան	ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Եղիազարյան	«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար
Վ. Չիբուխչյան	«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ
Գ. Մայիլյան	«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ
Թ. Մինասյան	«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի հասարակայնության հետ կապերի պատասխանատու
Լ. Գյուլքանյան	«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի իրավաբան

1. Առաջարկություններ փրկարար ծառայողների, զինծառայողների, զինծառայողներին հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների անվճար բժշկական օգնության և սպասարկման գործընթացի բարելավման վերաբերյալ

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

- 1) փրկարար ծառայողների, զինծառայողների, զինծառայողներին հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների անվճար բժշկական օգնության և

սպասարկման բոլոր առաջարկները քննարկել ՀՀ առողջապահության ֆինանսավորման ոլորտի բարեփոխումների շրջանակներում.

2) հանձնարարել ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանին՝ հաշվարկել ուժային կառույցների բոլոր ծառայողներին միասնական կարգով բուժսպասարկում իրականացնելու պարագայում ՀՀ պաշտպանության նախարարության բուժփմնարկների լրացուցիչ ծանրաբեռնվածության աստիճանը և աղյուսքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

3) հանձնարարել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին՝ փրկարար ծառայողների, զինծառայողների, զինծառայողներին հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների անվճար բժշկական օգնության և սպասարկման բոլոր առաջարկները ներկայացնել ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին և ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին:

2. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին և ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին՝ համատեղ ուսումնասիրել բացահայտված նորմատիվ կարգավորումներ պարունակող անհատական ակտերի (նախարարի հրամաններ) բնույթները, դասակարգել դրանք և ըստ այդմ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել նոր իրավական ակտերի ընդունման համապատասխան ժամանակացույց.

2) հանձնարարել ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին՝ Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին ներկայացնել լիցենզիայի տրամադրման հայտերի մերժման հիմքերը.

3) հանձնարարել Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին՝

ա. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահ Ա. Մարտիրոսյանի հետ համատեղ քննարկել 2013 թվականի հուլիսի առաջին 10-օրյակում ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի ՀՀ կառավարության 2004 թվականի հեկտեմբերի 9-ի N 1751-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու հետ կապված հարցերը.

բ. շահագրգիռ մարմինների ղեկավարների հետ ևս մեկ անգամ քննարկել բոլոր առաջարկները և վերջնական փաթեթը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. Դեղերի պետական գրանցում, դեղերի ներմուծում-արտահանում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանի առաջարկությանը համապատասխան՝ հարցի քննարկումը հետաձգել և այն քննարկել առաջիկայում ներկայացվելիք համապատասխան օրենսդրական առաջարկության հետ մեկտեղ:

4. Առաջարկություններ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման գործընթացի բարելավման վերաբերյալ

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման գործընթացի բարելավման առաջարկները քննարկել ՀՀ առողջապահության ֆինանսավորման ոլորտի բարեփոխումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ